Singleton
photographs

369
S-CC

369
Տ-26

1 MAR 2010

ՏԱՐԵԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՆՐԱԿԱՆ ԱՏԵՆԻՆ ՅԱՆՁԱՆՁԱՆԱՑ
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՑ

ԲԱՏԱԻԻՈՅ

ՎԱՍՆ 1907 ԱՄԻ

370
Զ396-ՏԵ

1908
ՆՈՐ—ՋՈՒՂԱ
Տպարան Ս. Ամենափրկիչ Վանաց

369
Տ-26
370
Զ396-ՏԵ

ՏԱՐԵԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՆՐԱԿԱՆ ԱՏԵՆԻՆ ՅԱՆՁԱՆՁԱՆԱՑ
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՑ

ԲԱՏԱՒԻՈՅ

ՎԱՍՆ 1907 ԱՄԻ

РЕДАКЦІЯ ГАЗЕТЫ „МШАКЪ" ТИФЛИСЪ
Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1908

ՆՈՐ–ՋՈՒՂԱ

Տպարան Ս. Ամենափրկիչ Վանաց

44.359
13 AUG 2013

ՏԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հանրական Ատենին Ցանձանձանաց Հայ ժողովրդեան Ջավու, վասն 1907 ամի, ընթերցեալ առաջի Հանրական ժողովի, գումարեալ ի ժողովարանի Ս. Յովհաննու Եկեղեցւոյ ի Բթավիա, յ'7 Ջուն ամսոյ 1908 ամի ի 10 ժամու առաւօտեան։

Մեծարգոյ Տեարք

Ըստ Պայմանադրութեան Ազգային Սահմանադրութեան մեր, ահա Ատեան մեր խնդրէ յայս առնել Արգոյ Ժողովիդ զանցս ամին անցելոյ, և տալ համարս զՑանձանձանաց երեքին Հաստատութեանց մեր աստ, որոց վերաբերելի հաշուետումարք, թղթակցութիւնք, հաշիւք եւայլն գտանին յառաջի Ժողովիդ։

ՀԱՆՐԱԿԱՆ ԱՏԵԱՆ ՑԱՆՁԱՆՁԱՆԱՑ

Զկնի ընտրութեան նոր Անդամոց Ատենին ի վերջին Հանրական Ժողովի ամին անցելոյ, չեղև փոփոխութիւն ինչ յանդամս նորին, այլ յայս տարւոջ յամսեանն Փետրվար ամսի մեծ և զգալի կորուստ եղև Ատենին, մահուամբ բարեյիշատակ Պարոն Գ. Տէր Գալստանի երկարամեայ Նախագահի իւրոյ։ Պաշտօնակիցք հանգուցելոյ պարտիք համարին յայտնել աստ խորին կարեկցական զգացմունս իւրեանց, և արձանագրել յարգանս և երախտիս վասն բազմամեայ ուղիղ և հաւատարիմ պաշտօնավարութեան և ծառայութեան նորին։

Հրաժարեցաւ ևս յայս տարւոջ յամսեանն Ապրիլի ի պաշտօնէ պարոն Խ. Պ. Մարկոս անդամն, ուստի այսօր լիցի ընտրութիւն երկուքին Անդամոց Ատենի։

Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵԿԵՂԵՑՒ

Ի վերջ տարւոյն անցելոյ, Արժ. Տէր Պօղոս քահանայ Գրիգորեան ժամանեաց աստ ի Ջուղայոյ, և ի սկզբան տարւոյս մտաւ ի պաշտօն Թեմակալութեան եկեղւոյս, և կատարէ բարեպէս

զհոգեոր մատակարարութիւն Ս. Եկեղեցւոյ մեր։

Կալուածք Եկեղեցւոյ գտանին ի բարւոք կացութեան, և եկամուտ նորին ի պատճառս բացակայութեան թեմական քահանայի, իբր Գ. 1877 լի աւելորդ եղև, զոր և Աստուան մեր պատեհ համարեաց ծախել վասն բարւոքութեանց և նորոգութեանց տանն նորին ի Կ. Պոլիս, որով յաջողեցաւ ամսական վարձ նորին սկսեալ Մէյ ամսոջ անցելոյ ի Գ. 277-է յաւելուլ մինչ Գ. 325։

ՄԱՆՈՒԿ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Հայ վարժապետ տեղւոյս պ. Յակոբեան զկնի 4 ամեայ ծառայութեան, պարտաւորեցաւ ի պատճառս ծանր անառողջութեան, հեռանալ ի պաշտօնէ ի վերջ Ապրիլ ամսոյ անցելոյ, և ելանել առ ծննդավայր իւր։ Աստուան մեր դեռ չէ հոգացեալ վասն տեղափոխի նորին այլ թողուլ զայն վասն որոշման յարգոյ Ժողովիդ։

Յեկամտաց վեր ազգասէր Հաստատութեան իբր Գ. 6445 լի ծախեցաւ յընթացս տարւոյն վասն ուսման մանկանց, յորոց Գ.2940 կամ 3600 ռուբլի նպաստ Մարդ. Ճեմարանի ի Կալկաթա, Գ. 1565 վասն Ջուղայու և այլ բացակայս, և Գ. 1940 ի նպաստ Ջավաբնակ հայ մանկանց մեր։

Բոլոր կալուածք Հաստատութեան մնան չարունակ ի վարձու և գտանին ի բաւարարական կացութեան, և եկամուտ նորին տարւոյն իբր Գ. 2385 լի առաւելեալ բարձեցաւ ի վերայ դրամագլխոյ։

ՀԱՅԿԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ցընթացս տարւոյն Գ. 1275 ծախեցաւ ի նպաստ Լեթենկին Հայազգ կարօտաւորաց Ջավու, և իբր Գ. 344 առաւելեալ եկամուտ բարձեցաւ ի վերայ դրամագլխոյ նորին։ Անշարժ կալուածք նորին չարունակեն մնալ ի վարձու և գտանին ի բարւոք դրութեան։

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՔ ՋՈՒՂԱՅՈՒ

Միացեալ դումար դրամագլխոյ վեր Հաստատութեանց յաւանդի և ապահովեալ ասա, ց՝վերջ Դիզէմբր 1907 առաւելացաւ մինչ Գ. 115779. 83 և յայս տարւոջ յամսեանն Ապրիլի Գ. 5445.80 լի

փոխանցաւ առ Ջուղա ի հաշիւ յետագայից.

Արկեղն Ազգատաց Ջուղայու .	Գ.	1210—
Կենդր. Դպրոցի » .	»	1119—
Կենդր. Դպրոցի նուէր Մ. և Յ. Ուսումն.	»	900—
Ս. Ամենափրկիչ Վանս Ջուղայու	»	960—80
Ս. Մինաս Եկեղեցւոյ » .	»	404—
Մ. Կատարինեան Օրիորդաց Դպրոցի	»	330—
Ս. Յովհաննու Եկեղեցւոյ . .	»	257—
Ս. Պօղոս Դպրոցի Սանդիբարանի .	»	100—
Ս. Ամենափրկիչ Տպարանի .	»	165—
Դումարն	Գ.	5445 –80

Կցորդին ընդ սմա կշիռք մանրահաչուոց երեքին Հաստատութեան մեր փակեալք ց՝վերջ Դիզէմբր 1907 ամի։

Բրավիա 7 Ջուն 1908

Գ. Մ. Յովհաննէս
Աստն. Կաս.

Կշիռ մայրահաշուոյ Դեկտեմբեր ամսոյ վասն

2	Տուն ի Կոնինգս-Պլայն . .			Գ. 40000	
3	Շինուածք Եկեղեցւոյ . .			» 28000	
4	Անօթեղէնք » . . .			» 2000	
5	Կահ և կարասիք » . . .			» 1	
6	Ջավա-Բանք Շէյրք Եկեղ. . .			» 1800	
7	Ջարտրա-Բանք . . .			» 8000	
10	Մ և Յ. Ռոսումնարան . .			» 1720	
51	Դրամարկղն . . .			» 431	86
56	Նէդ-Ինդ Էսկօմպաս Մարսիալէ .			» 4453	80
	Հաստատութիւնք Ջուղայու				
16	Մթիւրանոց Վանայն ի Կալի-Բսար	Գ. 13000			
17	Ջավաթանք Շէյրք Վանայն 13 հատ	» 11700			
44	Էսկօմպաս » » 2 »	» 2600			
18	Ջավաթանք » Գանձանակ Ջուղ. Աղքատաց 22 »	» 19800			
19	» » Ս. Մինաս Եկեղ. 11 »	» 9900			
20	» » Ս. Կարինէ. Դպրց. 1 »	» 900			
21	» » Հոգևորկն. Դպրց. 9 »	» 8000			
22	» » Ս.Սաֆիննս. Եկեղ. 4 »	» 3600			
23	» » Հայ Հաբրկութն. 10 »	» 9000			
24	» » Կենդրկն. Դպրց. 7 »	» 6300			
25	» » Ամենափ. Տպարանի 3 »	» 2700			
26	» » Ս. Պօղոս Դպրց. 7 »	» 6200			
27	» » Ս. Յովհաննու Եկեղ. 7 »	» 6300			
28	» » Ս. Գրիգոր Եկեղ. 4 »	» 3600			
29	» » Ս. Գէորգ Եկեղ. 1 »	» 900		» 104500	
				Գ. 190906	66

1907 ամի Ս. Յովհաննու Եկեղեցւոյ ի Բթավիա։

1	Ստացուածք Եկեղեցւոյ . .			Գ. 73830	60
8	Գանձանակ գրաւոր աշխատանաց			» 871	23
45	Հայկեան Միաբանութիւն ի Ջավա			» 425	
	Հաստատութիւնք Ջուղայու				
30	Ամենափրկչեան Ս. Վանք .	Գ. 28260	80		
31	Գանձանակ Աղքատաց . .	» 21010			
32	Ս. Մինաս Եկեղեցի . .	» 10304			
33	Ս. Կատարինէ Օրիորդաց Դպրոց	» 5730			
34	Հոգևորական Դպրոց . .	» 13287	54		
35	Ս. Ստեփաննոս Եկեղեցի . .	» 4389	63		
36	Կենդրոնական Դպրոց . .	» 7419			
37	Ամենափրկչեան Տպարան . .	» 2865			
38	Ս. Պօղոս Դպրոց Սանդիբարանայ	» 7294	22		
39	Ս. Յովհաննու Եկեղեցի . .	» 6557			
40	Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի	» 4241	67		
41	Ս. Գէորգ Եկեղեցի . .	» 1060	67		
42	Կտակ հանգ. Թադէոս Արք-Եպիսկոպոսի	» 3360	30	» 115779	83
				Գ. 190906	66

Կշիռ մայրահաշւոյ Դեկտեմբեր ամսոյ

2 Մթերանոցք ի Կալի-Բազար (2 հատ)			Դ. 45000	
3 Տուն ի Տանաբանդ . .			» 24000	
4 Տուն ի Գանգ-Սկոտ . .			» 12000	
5 Ջաւա-Բանք Շէյրք . .			» 48500	
6 Գրքատուն			» 1	
7 Տնեղէն			» 1	
16 Գրաւական ի վերայ տան միոյ ի Բատավ			» 6000	
27 Դրամարկղն			» 322	72
30 Գրաւական անշարժ ստացուածոց			» 805	03
31 Յարութիւն Բարսեղ . .			» 375	
			Դ. 137004	75

Կշիռ մայրահաշւոյ Դեկտեմբեր ամսոյ

2 Մթերանոց ի Կալի-Բազար . .			Դ. 7000	
3 Տուն ի Քրօն-Սիրի . .			» 15000	
4 Ջավա-Բանք Շէյրք . .			» 850	
5 Տնեղէն			» 1	
15 Ս. Յովհաննու Եկեղեցի . .			» 425	
17 Դրամարկղն			» 149	52
			Դ. 23425	52

Բրայլիա

Յ. Ն. Տէր Գալստանեան

վասն 1907 ամի Մ. և Յ. Ուսումնարանի։

1 Ստացուածք Ուսումնարանի .			Դ. 135284	75
8 Ս. Յովհաննու Եկեղեցի . .			» 1720	
			Դ. 137004	75

վասն 1907 ամի Հայկեան Միաբանութեան։

1 Ստացուածք Հայկեան Միաբանութեան			Դ. 23425	52
			Դ. 23425	52

31 Դեկտեմբեր 1807

Գանձապահ-Կառավարիչ

ՀԱՆՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՔԱՌԱՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ըստ յայտարարութեան շրջաբերականի Ատենին Ցանձանձանաց Հայ ժողովրդեան ի Ջավա, թուագրեալ 2 Մէյ 1908, գումարեցաւ Ժողով Հանրական ի ժողովրդեան մեր, ի ժողովարանի Ս. Յովհաննու Եկեղեցւոյ ի Բթավիա, յաւուր Կիւրակէի յ7 Ջուն ամսոյ 1908 ամի, ուր ներկայ եղեն·

Սրբակրօն Տէր Պօղոս քահանայ, Պարոնայք Մ. Մ. Զօրաբ, Յ. Ն. Տէր Գալստան, Գ. Մ. Տէր Յովհաննէս, Մ. Յ. Զօրաբ, Ս. Ա. Ստեփաննոս, Յ. Կ. Սարգիս, Մայնհարտ Յովհաննէս, Կարօ Յովհաննէս, Տրդատ Յովհաննէս, Շէրարդ Յովհաննէս և Գէորգ Արգար։

Պարոն Գ. Մ. Տէր Յովհաննէս կալաւ գաթոռ ժողովին։

Ընթերցան զանազան թուղթք ստացեալ ի հասարակութենէ Սուրբայիոյ, ի Սմարանգայ, և այլ ուրեք հայ ժողովրդեան մեր յորոց կարգին երևափոխանք աստ, վասն տալոյ զքուէս յայսմ ժողովի։

Առաջարկեցաւ ի Գ. Մ. Յովհաննէսէ և ընդունելի եղև ժողովին, կարեկցական զգացմունս արձանագրել, վասն մահուան բարեյիշատակ Պարոն Գ. Տէր Գալստանի, նոյնպէս և երախտագիտութիւն վասն բազմամեայ հաւատարիմ ազգային ծառայութեանց նորին։

Ընթերցաւ յԱթոռակալէն Տարեոր Տեղեկագիրն 1907 ամի, երեքին Հաստատութեանց մեր որ կալաւ հաւանութիւն ժողովին, և որոշեցաւ ըստ սովորականին առաքել զայն ի Ջուղա վասն տպագրութեան։

Ընթերցաւ թուղթ և հեռագիր ստացեալ ի Հոգաբարձութենէ Երկսեռ Դպրոցաց Ջուղայու, յայտնելով կատարումն 50-ամեայ Յօբելեանի Ս. Կատարինեան Օրիորդաց Դպրոցի Ջուղայու, և խնդրելով դրամական օգնականութիւն վասն նոր դրամագլուխ հաստատելոյ ի նպաստ նորին։ Որոշեցաւ հեռագրաւ շնորհաւորել Յօբելեանն և թուղթ հանգամանակութեան շրջաբերել ի մէջ ժողովրդեան մեր յօգուտ նորին, և առաջարկութեամբ պ. Ս. Ա. Ստեփաննոսի ընդունելի եղև ժողովին, ի Սնդկէ Մ. և Յ. Ուսումնարանի Գ. 1000 լի հանգանակել վասն նորին, և տարեկան նպաստն Երկսեռ Դպրոցաց ի սկզբան 1909 ամի Գ. 900-է յաւելուլ մինչ Գ. 1200։

Ապա Աթոռակալն յառաջ բերեալ ժողովին առաջարկութիւն Հայ հասարակութեան Սուրբայիոյ, վասն փոփոխութեանց պայմանագրութեանց Ազգային Սահմանադրութեան մեր, որ և զկնի երկայն քննութեան և վիճելոյ, աւելեօք ձայնից չեղև ընդունելի ժողովին։ Նոյնպէս և առաջարկ պ. Մ. Մ. Զօրաբի, վասն փոխելոյ

զկանոն և սահմանադրութիւն մեր ի «Սահմանադրութիւն և Կարգաւորութիւն Բարեգործական Գոյից Հայ ժողովրդեան ի Ջավա» չեղև ընդունելի ժողովին։

Խնդիր հայ վարժապետի վասն տեղւոյս յառաջ բերեալ որոշեցաւ յանձնել զայն Ատենին հոգալ որպէս պատեհ համարեսցէ։

Առաջարկեցաւ ի պ. Կարօ Յովհաննէսէ և ընդունելի եղև ժողովին, այսուհետև միայն արժանաւոր հայ կարօտաւորաց թոյլ տալ օթևանիլ ի շինուածս Ս. Յովհաննու Եկեղեցւոյ մեր, այլ ոչ յաւել քան երկու կամ երեք եօթնեկից, և նոքա որք արդէն բնակին անդ պարտ են զկնի վեց ամսոց ելանել անդէն, և առանց ընդունելութեան Ատենին Ցանձանձանաց չկարէ ոք այսուհետ օթևանիլ ի վեր շինուածս Եկեղեցւոյ։

Առաջարկեցաւ ի պ. Գ. Մ. Յովհաննէսէ և ընդունելի եղև ժողովին, տխրութիւն և պախարակումն ժողովի յայտնել վասն ի Ջուղայոյ ստացեալ զանազան թռուցիկ թերթից, վերաբերութեամբ անդ պատահեալ տարաձայնութեանց, յատկապէս վասն զրպարտութեանց ընդդէմ Գերապատիւ Տէր Բագրատ Վարդապետ Վարդազարեանի, որ ըստ դատողութեան ժողովոյս՝ յաւէլ երախտագիտութեան և գովեստի է արժանի վասն այսքանամեայ անընդհատ և բազմարդիւն վաստակոց և ջանից իւրոց յօգուտ և վասն առաջադիմութեան ազգին մեր։

Առաջարկեցաւ ի պ. Գ. Մ. Յովհաննէսէ և ընդունելի եղև ժողովին, զի հաստատեցաւ թէ ջանիւք երկոցին աշակերտաց՝ արդէն յաջողեալ է մեծ և արժանաւոր գումար ժողովել յօգուտ Մարդասիրական Ճեմարանի ի Կալկաթա, տարեկան նպաստս տեղւոյս ի Սնդկէ Մ. և Յ. Ուսումնարանի վասն նորին, ըստ կրման ժամանակի ներկայ ուսանող երկոտասան աշակերտաց տալ դադարել, և պիտոյացուցանել զայն այնուհետ վասն հոգալոյ զծախս բարձր ուսման աստ ի Բթավիա, հինգ կամ յաւել ըստ հանգամանաց, ի լաւանունդ, առաջադէմ և արժանաւոր հայ աշակերտաց Դպրոցաց Ջուղայու, որոց համակ այսուհետ հաստատեսցի և ընտրութիւն յանձնեսցի Գերապատիւ Տէր Բագրատ Վարդապետին և այլ երկու Ջավածանօթ աշխարհականաց Ջուղայու։

Ապա եղև ընտրումն քուէարկութեամբ երկոցին Անդամոց Ատենին և աւելեօք ձայնից Պարոնայք Թ. Թովմաս և Ս. Ա. Ստեփաննոսեան ընտրեցան ի վեր պաշտօն։

Առաջարկութեամբ պ. Յ. Կ. Սարգսի շնորհակալութիւն ժողովին մատուցաւ Աթոռակալին և Ատենին և փակեցաւ ժողովն։

Ատենադպիր Գ. Մ. Յովհաննէս

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7/XI 1922
ИМЕНИ А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՄԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգային գրադարան»
NL0229064

44. 359